

# ՄԻԶ ԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

## ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Համբուղանորացման պայմաններում ավելի մեծ թվով երկրների սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն գործոններից կարելի է համարել բնակչության միջազգային միգրացիան, որը նպաստում է աշխատանքի ձկուն շուկայի ծևավորմանը, գիտատեխնիկական առաջընթացի նվաճումներին զարգացող երկրների հարմարեցմանը, աշխատանքային ռեսուրսների առավել ռացիոնալ օգտագործմանը, համաշխարհային քաղաքակրթությունների փոխազդեցությանը և փոխհարստացմանը:

Աշխատանքի միջազգային շուկայի ծևավորումը վկայությունն է այն բանի, որ միասնացման գործընթացներն ընթանում են ոչ միայն տնտեսական և տեխնոլոգիական ոլորտներում, այլև ընդգրկում են սոցիալական և աշխատանքային հարաբերությունների անհամեմատ ավելի բարդ բնագավառներ:

**Հիմնաբառեր.** միգրացիա, աշխատանքի շուկա, բնակչության զրակածություն, սոցիալական քաղաքականություն, միգրացիոն հոսքեր

Միջազգային միգրացիան տնտեսական ազդեցություն է թողնում ինչպես աշխատուժ ընդունող, այնպես էլ այն տրամադրող երկրների վրա: Ամբողջ աշխարհում բնակչության միգրացիան աստիճանաբար հիմնականում որպես ռեսուրս է ընկալվում, որի արդյունավետ օգտագործումից կարող է էականորեն կախված լինել երկրների տնտեսական զարգացումը<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **Мукомель В.И.**, Миграционная политика в России: Постсоветские контексты. М., 2005, էջ 351; **Рязанцев С.В.**, Влияние миграции на социально-экономическое развитие Европы: современные тенденции. Ставрополь: Книжн. изд., 2001, էջ 542; **Топилин А.В.**, Рынок труда России и стран СНГ: реалии и перспективы развития. М.: ЗАО Изд. Экономика, 2004, էջ 321:

Բնակչության միգրացիայի և երկրի տնտեսական զարգացման փոխազդեցության վերլուծությունն ընդգրկում է հետևյալ տեսանկյունները.

- միգրացիան և մակրոտնտեսական գործընթացները. միգրացիայի և համախառն ներքին արդյունքի, աշխատավարձի մակարդակի, գնաճային գործընթացների, ներդրումային ակտիվության, ապրանքների պահանջարկի, հավաքագրվող հարկերի ծավալների, այլ մակրոտնտեսական ցուցանիշների փոխադարձ կապը, միգրանտների դրամական փոխանցումների ազդեցությունը երկրի վճարային հաշվեկշռի վրա,
- միգրացիան և աշխատանքի շուկան. միգրացիոն գործընթացների ազդեցությունը գործազրկության մակարդակի, աշխատուժի պահանջարկի և առաջարկի, աշխատատեղերի համար տեղական բնակչության և միգրանտների միջև մրցակցության վրա,
- միգրացիան և բնակչության զբաղվածությունը. բնակչության գրադարակության ոլորտում կառուցվածքային փոփոխությունները (ըստ որակավորման, աշխատանքի գործադրման ոլորտների, տնտեսության ճյուղերի), միգրացիայի ազդեցությունն աշխատանքային ռեսուրսների թվի վրա,
- միգրացիան և միկրոտնտեսական գործընթացները. գործուղումների արդյունավետության գնահատումը, միգրացիոն գործընթացների ազդեցությունը տնային տնտեսությունների կենսամակարդակի վրա,
- միգրացիան և թաքնված գործընթացները. միգրացիայի ազդեցությունը ստվերային տնտեսության վրա, անօրինական զբաղվածության ծավալները,
- միգրացիան և սոցիալական քաղաքականությունը. միգրանտների ընդունմանն ու սոցիալական ադապտացմանն ուղղված պետական ծախսները, միգրանտների սոցիալական ապահովումը, հավելյալ ենթակառուցվածքի ստեղծումը, միգրացիայի դերը կենսաթոշակային համակարգի բարեփոխման գործում:

Միաժամանակ, միգրացիոն հոսքերը վերածվել են համաշխարհային հանրության կյանքի բոլոր կողմերի վրա ազդող համընդգրկուն երևույթի: Դրանք ձևակերպում են նոյորակի բնակչության թվի փոփոխության պայմաններում: 2000–2010 թթ. ընթացքում այդ թիվը 1,6 միլիարդից աճել է՝ հասնելով 6 միլիարդի և, ՄԱԿ-ի փորձագետների հաշվարկների համաձայն, 2050-ին կհասի 9 միլիարդի սահմանագիծը<sup>2</sup>:

Փորձագետների գնահատմանը՝ միջազգային միգրանտների ընդիհանուր թիվը 2006 թվականի 190,6 միլիոնից 2012 թ. հասել է 214 մլն-ի՝ կազմելով աշխարհի ամբողջ բնակչության 3,1%-ը, որից 133,8 միլիոնը բնակվում էին զարգացած երկրներում (62,5%), 80,2 միլիոն՝ զարգացող երկրներում (37,5%), այդ թվում՝ 11,1 միլիոն՝ աշխարհի առավել զարգացած տարածաշրջաններում (5,2%):<sup>3</sup> 2006–2012 թթ. միգրանտների թիվն աշխարհում աճել է 58 միլիոնվ. աճի տեմպերը 2000–2006 թթ. 1,9%-ից 2006–2012 թթ. հասել են 2,4%-ի: Զարգացած երկրներում միգրանտների թիվը 2006–2012 թթ. աճել է 52 միլիոնվ, իսկ զարգացող երկրներում՝ մոտ 6 միլիոնվ: Արդյունքում՝ ավելի մեծ թվով միջազգային միգրանտներ են կենտրոնանում աշխարհի զարգացած տարածաշրջաններում (աղյուսակ 1):

<sup>2</sup>Տես <http://www.demoscope.ru/weekly/2007/0271/barom02.php>

<sup>3</sup>Տես նոյն տեղը:

## Այլուսակ 1

**Ներգաղթաժների թվով առաջատար պետությունների տասնյակը  
(2013 թ. հունվարի 1-ի դրությամբ)\***

Երկիր	Ներգաղթալիների թվաքանակ /նշ/	Ներգաղթալիների մասնաբաժնը բնակչ. ընդհանուր թվաքանակում %/
ԱՄՆ	38,4	12,9
Ռուսաստան	12,1	8,5
Գերմանիա	10,1	12,2
Ուկրաինա	6,8	14,4
Ֆրանսիա	6,5	10,7
Սաումեյան Արաբիա	6,4	26
Կանադա	6,1	18,9
Հնդկաստան	5,7	0,5
Մեծ Բրիտանիա	5,4	9
Իսպանիա	4,8	11

\*Աղբյուր՝ <http://www2.unhabitat.org/programmes/guo/>

Ինչ վերաբերում է աշխարհի հիմնական աշխարհագրական տարածաշրջաններին, ապա 2012 թվականին միջազգային միգրանտների առավելագույն քանակն արձանագրվել է Եվրոպայում (ավելի քան 64 միլիոն մարդ), դրան հետևում են Ասիան, Հյուսիսային Ամերիկան: Եվրոպական երկրներին բաժին է ընկել միջազգային միգրանտների 33,6, Ասիային՝ 28, Հյուսիսային Ամերիկային՝ 23,3 տոկոսը: Աֆրիկայում կենտրոնացած է միջազգային միգրանտների 9 տոկոսը, Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավագանի երկրներում՝ 4 տոկոսից, Օվկիանիայում՝ 3 տոկոսից էլ պակաս:

2006 թվականին միգրանտների ընդհանուր թվի 75 տոկոսը կենտրոնացած էր 30, իսկ 2012 թվականին՝ 28 երկրում: Այդ խմբում ակնհայտորեն առաջատար դիրքերում է ԱՄՆ-ն, որտեղ 1990 թվականին ապրում էր միգրանտների 15%-ը, 2006 թ.՝ 20%-ը, իսկ 2012 թ.՝ 22%-ը:

2010–2012 թվականներին միջազգային միգրանտների ընդհանուր թվի հավելածի 75 տոկոսը բաժին էր ընկնում աշխարհի 17 երկրի: ԱՄՆ-ում միգրանտների թիվն ավելացել էր 15 միլիոնով, Գերմանիայում և Իսպանիայում՝ ավելի քան 4 միլիոնով: Միևնույն ժամանակ, միգրանտների թիվը կրճատվել է 72 երկրում՝ առավելապես իրանում և Պակիստանում՝ կապված աֆղան փախստականների զանգվածային հայրենադարձության հետ:

Միգրանտները կազմում են 41 երկրի բնակչության ավելի քան 20 տոկոսը, որոնցից 31-ում հաշվառվում է մեկ միլիոնից էլ պակաս բնակիչ: Միգրանտների համակենտրոնացման երկրներն են՝ Պարսից ծոցի երկրների համագործակցության խորհրդի անդամ երկրները, Հոնկոնգը, Իսրայելը, Հորդանանը, Սինգապուրը և Շվեյցարիան: Ավստրալիայում և Սաումեյան Արաբիայում, որտեղ բնակչության ընդհանուր թիվը գերազանցում է 10 միլիոնը, միգրանտները բնակչության առնվազն 1/5 մասն են: Կանադայում այդ մասնաբաժինն ավելի փոքր է՝ 18,9 տոկոս, ԱՄՆ-ում՝ 12,9 տոկոս, Ռուսաստանի Դաշնությունում՝ 8,4 տոկոս:

Օրինակ՝ XX-XXI դդ. սահմանագծին Ուսուաստանի Դաշնությունը ԱՄՆ-ից հետո աշխարհում երկրորդ ընդունող երկիրն էր և առաջինը Եվրոպյում՝ շուրջ 13,3 միլիոն միգրանտ կամ աշխարհի միգրանտների 7,6 տոկոսը<sup>4</sup>: 2010 թվականին Ուսուաստանի Դաշնություն մշտական բնակության նպատակով ժամանել է 182,4 հազար մարդ, իսկ երկրից մեկնել է 54,1 հազարը: Այս ցուցանիշների տարբերությունը գերազանցում մեկնողների 128,3 հազարը: Դա էլ, իր հերթին, գերազանցում է նախորդ 5 տարիների ցուցանիշները (2009-ին՝ 107,4 հազար, 2008-ին՝ 39,4 հազար, 2007-ին՝ 35,1 հազար, 2002-ին՝ 77,9 հազար, 2006-ին՝ 72,3 հազար մարդ), սակայն զգալիորեն ցածր է 1990-ականների կեսերի ցուցանիշից<sup>5</sup>:

2009 թվականի համեմատությամբ 2010 թվականին միգրացիայի հավելածը 20,9 հազար մարդ կամ 19,4 տոկոս էր: Դա պայմանավորված էր դեռևս 1990-ականների սկզբին շարունակվող՝ երկրի տարածքից մեկնողների թվի կրճատմամբ, ինչպես նաև հաշվառվածների քանակի աճով<sup>6</sup>:

2010 թվականին, ինչպես նախկինում էր, Ուսուաստանի Դաշնություն ներգաղթյալների շուրջ 95 տոկոսը ԱՊՀ երկրներից էր: Ուսուաստանից արտագաղթողների թիվը 2009 թվականին նվազել է նախորդ տարիների համեմատությամբ:

Ընդհանուր արժանամբ, 2012 թվականին ԱՊՀ և Բալթյան երկրներ մեկնել է 36,0 հազար մարդ (2011 թվականին՝ 36,8 հազար, 2010 թվականին՝ 37,8 հազար, 2009 թվականին՝ 47,0 հազար, 2008 թվականին՝ 53,0 հազար, 2007 թվականին՝ 62,6 հազար մարդ), իսկ աշխարհի այլ երկրներ՝ 18,1 հազար մարդ (համապատասխանաբար՝ 33 հազար, 42 հազար, 53,7 հազար և 58,6 հազար մարդ): Այսպիսով՝ եթե նախկին միութենական հանրապետություններ մեկնողների թիվը կրճատվել է 2,2 տոկոսով, ապա հեռավոր արտերկիր մեկնողների թիվը նվազել է կրկնակի՝ շուրջ 45 տոկոսով<sup>7</sup>:

Միևնույն ժամանակ, չի կարելի հաշվի չառնել, որ միջազգային միգրացիան այսօր, ինչպես և նախկինում, սերտորեն կապված է աշխատուժ ներմուծող և արտահանող երկրների սոցիալ-տնտեսական զարգացման հետ և կարող է ունենալ թե՛ դրական, թե՛ բացասական հետևանքներ:

Դիտարկելով միջազգային միգրացիայի ազդեցությունը պետությունների տնտեսական զարգացման վրա՝ կարելի է առանձնացնել որոշակի առավելություններ: Առաջին հերթին՝ աշխատուժ արտահանող երկրում կրճատվում է գործազրկությունը, նվազում են գործազրուկների սոցիալական ապահովության ծախսերը, արտերկրում աշխատող քաղաքացիներն իրենց եկամուտների մի մասը փոխանցում են հայրենիք՝ դրանով իսկ բարձրացնելով բնակչության կենսամակարդակը և բարելավելով Վճարային հաշվեկշիռը: Բացի այդ, արտերկրում գտնվող աշխատուժը, որպես կանոն, ձեռք է բերում ավելի բարձր որակավորում, բարձրացնում է իր կրթական նակարդակը և վերադարձնալով հայրենիք՝ բերում է կապիտալ՝ դրամական կամ իրեղեն ձևով:

<sup>4</sup> Տե՛ս Մиграция во взаимосвязанном мире: новые направления деятельности. Доклад глобальной комиссии по международной миграции. Перевод с англ., М.: Оргсервис, 2006, էջ 85:

<sup>5</sup> Տե՛ս Демографические итоги 2006 года (часть 2) // Население и общество. - Бюллетень Института демографии ГУ-ВШЭ, 2011, №281-282:

(<http://demoscope.ru/weekly/2007/0281/barom01.php>)

<sup>6</sup> Տե՛ս նոյն տեղը:

<sup>7</sup> Տե՛ս նոյն տեղը:

## Աղյուսակ 2

**Աշխատուժի միջազգային միգրացիայի սոցիալ-տնտեսական հմարավոր հետևանքները**

	Դրական	Բացասական
Աշխատուժ արտահանող երկիր	աշխատողների նոր որակավորման ծեռքբերում	որակյալ աշխատուժի կորուստ
	վճարային հաշվեկշռի պակասուրդի կրծատում	ոչ միայն ապրանքների, այլև աշխատուժի օտարերկրյա պահանջարկից կախվածության ուժեղացում
	աշխատանքի ներքին շուկայում լարվածության թուլացում	կապիտալ ներդրումների վերակողմնորոշում՝ արտադրության ռեսուրսների յուրացումից դեպի սպառում
Աշխատուժ ներմուծող երկիր	արտադրության տեխնոլոգիական և կառուցվածքային վերակառուցման դյուրացում	գնաճի ցուցանիշի աճ
	տարածաշրջանների ապահովածությունն աշխատուժով տվյալ բնակավայրում ապրող աշխատողների օգտագործում ավելի բարձր որակավորում պահանջող աշխատանքներում	արգելակում է աշխատախնայողական տեխնոլոգիայի ներդրմանը ներքին աշխատաշուկայի իրավիճակի բարդացում
	աշխատուժի արժեքի և ընդհանուր ծախքերի կրծատում ներգաղթյաների ներգավաճան պայմաններում գնաճի զայռում ներգաղթյաների խնայողությունների հակվածության շնորհիվ	գործազրկու օտարերկրացիների թվի աճ և նրանց ընտանիքների պահպանման ծախսերի ավելացում
	աշխատուժի որակի բարձրացում առավել երիտասարդ աշխատողների ընտրության միջոցով	

Գոյություն ունեն աշխատանքային միգրացիայի՝ արտահանող-երկրի տնտեսության վրա բացասաբար ազդող կողմեր: Առաջին հերթին՝ այն աշխատուժը, որի վերարտադրության համար ծախսվել են ազգային ռեսուրսները, արտերկիր մեկնելով, համախառն ներքին արոյունք ստեղծում է ոչ թե սեփական, այլ ընդունող երկրում: Երկրորդ՝ արտագաղթողների կապիտալ-ների փոխանցումները կրում են անկանխատեսելի, ոչ մշտական բնույթ: Երրորդ՝ արտերկիր, որպես կանոն, մեկնում են առավել տաղանդաշատ մարդիկ՝ գիտնականներ, արվեստի գործիչներ, մարզիկներ, բարձր որակավորում ունեցող մասնագետներ, ինչը, բնականաբար, թուլացնում է ինչպես ազգային տնտեսությունը, այնպես էլ՝ արտահանող երկրի գիտական ներուժը: Չորրորդ՝ խոչոր կապիտալատերերի կամ զգալի եկամուտներ ապահովողների արտերկիր մեկնումը երկար ժամկետով կամ մշտական բնակության նպատակով, մասնավոր հատվածին և պետական բյուջեն զրկում է երկրում կուտակված ֆինանսական միջոցներից, կրծատում է տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման ֆինանսավորման բազան:

Ինչ վերաբերում է աշխատուժ ներմուծող երկրների վրա միջազգային միգրացիայի ազդեցությանը, ապա այստեղ ևս գնահատականները միանշա-

նակ չեն: Եթե նախկինում օտարերկրյա աշխատուժի ժամանակավոր ներգաղթը դիտարկվում էր որպես սեփական աշխատանքային ռեսուրսների սակավության խնդրի լուծման հնարավորություն, ապա այժմ աշխատուժի պակասի խնդիրն այլևս արդիական չէ. աշխատանքային ներգաղթը սկսել են դիտարկել որպես ազգային աշխատաշուկայի սպառնալիք: Բացի այդ, ներգաղթայինների հայրենիք չվերադաշնալը անդրադաշնում է նաև ընդունող երկրի էթնիկ կառուցվածքի վրա՝ այդ երկրները դարձնելով բազմազգ և բազմամշակութային: Ազգային փոքրանամությունների քանակային աճը, ովքեր աստիճանաբար ավելի ակտիվորեն են մասնակցում ընդունող երկրի քաղաքական կյանքին, բույլ է տալիս խոսել արտաքին միգրացիայի՝ որպես սոցիալ-քաղաքական ուժի մասին, որը զգալի ազդեցություն է ունենում բնակչության միջազգային փոխանակման մեջ մասնակցություն ունեցող երկրների քաղաքական և հասարակական իրավիճակի վրա:

Հարկ է նշել նաև, որ երկրների տնտեսական և քաղաքական զարգացման վրա, բացի աշխատանքային միգրացիայից, աղոյում են միջազգային միգրացիայի այլ տեսակներ ևս: Օրինակ՝ վերջին տարիներին շատ պետություններ բախվում են փախստականների ներհոսքի և ապօրինի միգրացիայի խնդրին, որը բավականին բացասաբար է անդրադաշնում ընդունող պետությունների միգրացիոն քաղաքականության, սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակի վրա:

Մյուս կողմից՝ միջազգային միգրացիան, որպես տարբեր պետությունների տարածքում բնակչության վերաբաշխման բնական գործնթաց, աղոյում է ժողովրդագրական զարգացումների վրա: Վերջին շրջանում ավելի մեծ թվով գիտնականներ են խոսում այն մասին, որ «հատկապես ներգաղթը կարող է շատ երկրներ փորկել ժողովրդագրական ճգնաժամից»<sup>8</sup>: XX–XXI դր. սահմանագծին Արևմտյան և Արևելյան Եվրոպայի պետությունները, այդ թվում՝ ԱՊՀ երկրները, բախվում են ժողովրդագրական այնպիսի խնդիրների, ինչպիսիք են ծնելիության նակարդակի կտրուկ նվազումը, բնակչության ծերացումը, կյանքի միջին տևողության կրճատումը: Այդ երկրներ ներգաղթալուների՝ հատկապես երիտասարդների ներհոսքը փոխհատուցում է բնակչության բնական հավելածի անբարենպաստ շարժնթացը, նպաստում է երիտասարդացմանը:

Ընդ որում, միգրացիոն գործնթացների զարգացումը, ինչպես նաև դրանց տնտեսական արդյունքը կարևոր է գնահատել տարբեր ժամանակային հատվածներում՝ կարճաժամկետ, միջնաժամկետային, երկարաժամկետ, քանի որ տարբեր ժամանակահատվածներում միևնույն հոսքերը կարող են ունենալ խիստ տարբեր հետևանքներ: Բնակչության միգրացիայի տնտեսական արդյունավետությունը որոշվում է պետության համապատասխան քաղաքականության իրականացման ծախսերի և ստացվող սոցիալ-տնտեսական օգուտների հանադրման միջոցով<sup>9</sup>:

Անհատի միգրացիայի էֆեկտն արտացոլող ցուցանիշներից է աշխատանքային միգրանտների աշխատանքային եկամուտը կամ աշխատավարձը: Օտարերկրացների աշխատանքի օգտագործումը հանգեցնում է աշխա-

<sup>8</sup> Տե՛ս Յինչենկո Հ.Ի., Մиграция населения: теория и практика международно-правового регулирования: Монография. М.: Внешторгиздат, 2003:

<sup>9</sup> Տե՛ս Բյորով Ա.Ս., Эффективность внешней торговли России: методология расчетов. М.: Финансы и статистика, 2003, էջ 3:

տավարձի ընդհանուր մակարդակի նվազմանը կամ ընդունող երկրում դրա աճի դանդաղեցմանը:

Միգրանտները, որպես կանոն, համաձայնում են աշխատել ավելի ցածր աշխատավարձով, քան տեղացիները, ինչն էլ գրավում է գործատուներին: Եթե չինեին ներգաղթողները, գործատուները հարկադրված կլինեին բարձրացնել աշխատավարձն այնպիսի մակարդակի, որի դեպքում տեղացի աշխատողները աշխատելու պատրաստականություն կիայտնեին կամ էլ հարկադրված կլինեին դադարեցնել իրենց գործունեությունը:

Ցանկացած երկրի աշխատանքի շուկայի համար բնութագրական է համախառն աշխատավարձի և ներգրավվող աշխատողների թվաքանակի միջև կախվածությունը: Աշխատանքային միգրացիայի բացակայության դեպքում ազգային աշխատուժի սահմանափակ առաջարկը կերպարվողի համեմատաբար բարձր մակարդակի աշխատավարձի սահմանում: Աշխատավարձի աճը պետք է այնքան զգալի լինի, որ տեղացի աշխատողները համաձայնեն կատարել «սև» աշխատանք, որով հիմնականում չեն ցանկանում զբաղվել: Աշխատավարձը կաձի, իսկ դա կիանգեցնի ապրանքների և ծառայությունների գների բարձրացմանը:

Եթե երկրից արտաքսվեն ցածր որակավորում պահանջող աշխատանքով զբաղված բոլոր միգրանտները, դա էականորեն չի մեծացնի այդ աշխատանքով զբաղված տեղացիների զբաղվածությունը: Համենայնդեպս, այս ցուցանիշն անհամեմատ ավելի փոքր կլինի մեկնած միգրանտների քանակից:

Տնային տնտեսությունների միգրացիայի էֆեկտն արտացոլող ցուցանիշը աշխատողների մասնավոր դրամական փոխանցումներն են հայենիքում մնացած իրենց հարազատներին: Ապրանքներ ուղարկելու դեպքում հաշվի է առնվում դրանց արժեքը: Պաշտոնական դրամական փոխանցումների հոսքերի համընդգրկում գնահատականները, որոնք հիմնված են վճարային հաշվեկշիռների վիճակագրական տվյալների վրա, ցույց են տալիս, որ 2012 թվականին զարգացող երկրներ աշխատանքային միգրանտներն ուղարկել են 167 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը կրկնակի գերազանցում է միջազգային օգնության ծավալը<sup>10</sup>: 2012 թվականին ԱՊՀ երկրներ է փոխանցվել 6,3 մլրդ դոլար, ընդ որում, Ռուսաստան այդ երկրներից փոխանցումները կազմել են 1,2 մլրդ դոլար:

ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ դրամական փոխանցումների խոշոր ստացողներ են համեմատաբար ոչ մեծ երկրները, ինչպիսիք են Տոնգան, Մոլդովան, Լեսոտոն և այլն: Դրամական փոխանցումների հաշվին Լեսոտոյում աղքատ բնակչության թվաքանակը կրճատվել է 11, Գանայում՝ 5, իսկ Բանգլադেշում՝ 6 տոկոսային կետով<sup>11</sup>: Միգրանտների աճող փոխանցումները աշխարհում աղքատության հաղթահարման զգալի գործոն են համարվում:

<sup>10</sup> St. Global Economic Prospects 2006: Economic Implications of Remittances and Migration. The International Bank for Reconstruction and Development / The World Bank. Juri Dadush. 16 November, 2006:

<sup>11</sup> Ст. Глушченко Г.И., Влияние международной трудовой миграции на развитие мирового и национального хозяйства. М.: ИИЦ Статистика России, 2006, § 40:

**Աղյուսակ 3****Դրամական փոխանցումների ծավալը 2012 թվականին (մլրդ դոլար)**

Երկիր	մլրդ դոլար	Երկիր	մլրդ դոլար
ԱՊՀ	1,2	Իտալիա	4,7
Ավստրիա	2,0	Ֆրանսիա	4,9
Իսրայել	2,1	Իսպանիա	5,3
Քուվեյթ	2,4	Ռուսաստան	5,5
Հարավային Կորեա	2,5	Լյուքսեմբուրգ	5,6
Բելգիա	2,7	Գերմանիա	10,4
Մեծ Բրիտանիա	3,0	Շվեյցարիա	12,8
Հոլանդիա	3,3	Սառույան Արաբիա	13,6
Մալյազիա	3,5	ԱՄՆ	38,8

**Աղյուր՝ Կոմմերսանտъ-վլաստъ, 2013 թվականի հունվարի 29**

Միևնույն ժամանակ, չկան բավարար ապացույցներ, որ առավել խոշոր դրամական փոխանցումներ ստացող երկրներին բնորոշ են տնտեսական ավելի բարձր ցուցանիշներ: Օրինակ՝ Վրաստանը համարվում է արտագաղթի բարձր մակարդակով երկիր, սակայն այնտեղ բավականին ցածր են բնակչության մեկ շնչին բաժին ընկնող եկամուտները<sup>12</sup>:

Ենթադրվում է, որ միգրանտների հոսքերի աճը 2025 թվականին բարձր եկամուտներով երկրներում կպայմանավորի աշխատումի թվի 3-տոկոսանոց աճ: Իր հերթին դա կիանգեցնի բնակչության իրական եկամուտների 0,6-տոկոսանոց աճի, որը կկազմի շուրջ 356 մլրդ դոլար<sup>13</sup>: Այդ օգուտի չափերը կարելի է համեմատել ներուժային շահույթի հետ, որը ստացվում է ապրանքների առևտորի համընդհանրական բարեփոխման արդյունքում: Միգրանտների դրամական փոխանցումների գլխավոր առավելությունն այն է, որ, ի տարբերություն կապիտալի հոսքի, դրանք ավելի փոքր չափով են ենթարկվում տատանումների: Եվ ընդհակառակը՝ դրանց մեծությունն աճում է արտահանող երկրում տնտեսական ճգնաժամի խորացմանը զուգընթաց:

Գլոբալացման պայմաններում ավելի մեծ թվով երկրների սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն գործոններից է դաշնում բնակչության միջազգային միգրացիան, որը նպաստում է աշխատանքի ձկուն շուկայի ձևավորմանը, գիտատեխնիկական առաջընթացի նվաճումներին զարգացող երկրների հարմարեցմանը, աշխատանքային ռեսուրսների առավել ռացիոնալ օգտագործմանը, համաշխարհային քաղաքակրթությունների փոխազդեցությանը և փոխարստացմանը:

Աշխատանքի միջազգային շուկայի ձևավորումը վկայությունն է այն բանի, որ միջազգային միասնացման գործընթացներն ընթանում են ոչ միայն

<sup>12</sup> St's За справедливый подход к трудящимся-мигрантам в глобальной экономике. Доклад VI. 92-я сессия, шестой пункт повестки дня. МОТ, Женева, 2004, § 30:

<sup>13</sup> St's Global Economic Prospects 2006: Economic Implications of Remittances and Migration. The International Bank for Reconstruction and Development / The World Bank. Juri Dadush. 16 November, 2005, § 105:

տնտեսական և տեխնոլոգիական բնագավառներում, այլև ընդգրկում են սոցիալական և աշխատանքային հարաբերությունների անհամեմատ ավելի բարդ ոլորտներ:

Մեր կարծիքով՝ միջազգային աշխատանքային միգրացիան բնակչության միջպետական տարածքային տեղաշարժն է աշխատաշուկայում աշխատուժի պահանջարկի և առաջարկի հիման վրա, որի նպատակը նույտի երկրում գրաղվածության խնդրի լուծումն է: Միջազգային միգրացիան տնտեսական ազդեցություն է ունենում ինչպես աշխատուժ ընդունող, այնպես էլ այն տրամադրող երկրների վրա:

Բնակչության միջազգային միգրացիան ոչ միայն ազդում է երկրի բնակչության աճի դինամիկայի վրա, այլև զգալի ազդեցություն է ունենում սեռատարիքային կառուցվածքի վրա, նպաստում է տարածաշրջանային անհամանասնությունների հարթեցմանը, ժողովրդագրական վարքի կարծրատիպերի ձևավորմանը ինչպես տեղի բնակչության, այնպես էլ միգրանտների շրջանում, որոնց թիվը կարող է աճել զուտ ներգաղթի և ներգաղթյալների բնական հավելաձի շնորհիվ:

Այս համատեքստում ակնհայտ է դառնում, որ միջազգային միգրացիան, որպես հակասական և ոչ միանշանակ երևույթ, պահանջում է համակարգման որոշակի միջոցառումներ, որոնք պետք է իրականացվեն միգրացիոն գործընթացների միջազգային իրավական կարգավորման միջոցով՝ հաշվի առնելով համաշխարհային հանրության ընդհանուրական շահերը, առանձին պետությունների օբյեկտիվ հնարավորությունները և արդի պայմաններում ազգաբնակչության զարգացման առանձնահատկությունները:

**КОРЮН АТОЯН**

Ректор АГЭУ, доктор экономических наук,  
профессор

***Влияние международной трудовой миграции на экономику страны.***— В условиях глобализации важнейшим фактором социально-экономического развития большинства стран является международная миграция населения, которая способствует формированию гибкого рынка труда, адаптации развивающихся стран к достижениям научно-технического прогресса, более рациональному использованию трудовых ресурсов, к взаимодействию и взаимообогащению стран.

Формирование международного рынка труда является свидетельством того, что международные интеграционные процессы протекают не только в экономической и технической сферах, а также охватывают, более сложные сферы социальных и трудовых отношений, приобретающих глобальный характер.

**KORYUN ATOYAN**

ASUE Rector, Doctor of Economics,  
Professor

***Influence of the International Labour Migration on the National Economy.***— Under the conditions of globalization the major factor of socio-economic development of the majority of the countries is the international population shift which promotes formation of a flexible labour market, adaptations of developing countries to achievements of scientific and technical progress, to more rational usage of manpower, to interaction and enrichment of nations.

Formation of the international labour market confirms that the international integration processes proceed not only in economic and technical spheres, but also cover, more complex spheres of the social and labour relations obtaining global nature.